Doi:10.54503/0135-0536-2022.1-103

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԸ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)*

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ երիտթուրքական շարժում, հնչակյաններ, Օսմանյան կայսրություն, բարենորոգումներ, Հայկական հարց, Ինքնավար Հայաստան, Ստեփան Սապահ-Գյուլյան:

Նախաբան

XIX դ. վերջին՝ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջանում, սուլթանական բռնապետության դեմ ծավալվեց նաև թուրքական ընդդիմադիր ուժերի՝ երիտթուրքերի շարժումը: Այդ շարժման սոցիալական բազան կազմող թուրք՝ նոր ձևավորվող բուրժուազիայի, մտավորականության և զինվորականության ներկայացուցիչների մի մասը ձգտում էր տապալել սուլթանական վարչակարգը, որը դիտվում էր որպես կայսրության զարգացման համար խոչընդոտ, և երկիրը դնել զարգացման եվրոպական ուղու վրա: Իրականում, XIX դ. ընթացքում Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական համակարգի բարեփոխման ուղղությամբ մի շարք փորձեր կատարվեցին նաև եվրոպական մեծ պետությունների կողմից, սակայն ինչպես դրանք, այնպես էլ սուլթանների ընդունած թանզիմաթները (բարենորոգումների մասին հրովարտակները) 1839 թ. և 1856 թ. չկենսագործվեցին:

Հնչակյանները երիտթուրքական շարժման ակունքների մասին

Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական համակարգի բարեփոխումների հարցին անդրադարձել են XIX դ. վերջին քաղաքական պայքարի թատերաբեմ իջած Հնչակյան կուսակցության տեսաբանները: «Հիվանդ մարդն» առաջնորդող հոդվածում կուսակցության պաշտոնաթերթ «Հնչակը» համակողմանիորեն վեր է հանում Օսմանյան կայսրության արատավոր կողմերը, ցույց տալիս, որ նրա բարենորոգման փորձը «զուր ջանք և անօգուտ վաստակ եղավ յուր հեղինակների և պաշտպանների համար: Անողոք փորձը ցույց տվեց, որ թուրքը բարեփոխվելու ընդունակ ազգ չէր»[1]: Հոդվածի հեղինակի (Ստ. Սապահ-Գյուլյան) կարծիքով, եթե այդ ընթացքում որոշ փոփոխություն տեղի էր ունեցել, ապա միայն իշխող վերնախավի արտաքին ձևերի մեջ, իսկ բացարձակ մեծամասնությունը մնացել էր նույն մոլեռանդ մուսուլմանը, «նույն բարբարոսը, նույն անտարբերը դեպի քաղաքակրթությունը, նույն նենգ թշնամին՝ դեպի ճնշվող, մարդկային տարրական իրավունքներին ձգտող

---

* *Ներկայացվել է 01. X. 2021 թ., գրախոսվել է 10. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 20. I. 2022 թ.:*

[1] *«Հնչակ» (Լոնդոն), 10. IV. 1900:*

ազգությունները: Եվ անփոփոխ մնաց նաև իրերի դրությունը՝ երկրի վարչությունը՝ կաշառակեր ու ավերող, արդարադատությունը՝ ծախու և կողմնակալ»[2]:

Այս համատեքստում բոլորովին պատահական ու անհիմն չէին օսմանյան պետությանը տրված ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակների գնահատականները: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուիլյամ Գլադստոնի բնորոշմամբ՝ «Թուրքիայի պատմությունը տխուր և չար գործերով լի մի պատմություն է»[3], իսկ ըստ գերմանացի Հենրիխ Ֆիրբյուխերի՝ «Աշխարհի ոչ մի մասում կործանարար ուժերն այնպիսի բացառիկությամբ չեն իշխել..., ինչպես Թուրքիայում ...»[4]: Հնչակյան պարբերականի բնորոշմամբ՝ այս իրադրության անխուսափելի հետևանքը եղավ այն, որ «Հիվանդ մարդը» կորցրեց իր եվրոպական, ասիական, աֆրիկյան տիրույթների զգալի մասը, բայց դեռ պահպանում է իր գոյությունը՝ շնորհիվ եվրոպական տերությունների այն հակասությունների, որոնք առաջացել էին նույն «Հիվանդ մարդու» վերջնական բաժանման հարցի շուրջ: Ահա այս վտանգի կանխագգացումն էր այն ազդակը, որը համախմբեց թուրքական պետության քաղաքական համակարգի փոփոխության և Թուրքիան կործանումից փրկելու կողմնակիցներին, որոնք պատմության մեջ մտան «Երիտասարդ Թուրքեր» անունով: Զ. Կիրակոսյանը նշում է, որ երիտթուրքական առաջին անլեգալ խմբակը ստեղծվել է 1889 թ. Կ. Պոլսի ռազմաբժշկական ուսումնարանում: Նաև կա տեսակետ, որ այն ստեղծվել է Ժնևում 1891 թ.: Շարժման գաղափարախոսությունը պանթուրքիզմն էր (համաթյուրքականությունը), որի տեսաբաններն էին Յուսուֆ Ակչուրան, Ահմեդ Աղաևը, Զիա Գյոք Ալփը և այլոք: Նրանք հիմնավորում էին Միջերկրական ծովից մինչև Չինաստան տարածվող թյուրքալեզու ժողովուրդների քաղաքական միավորման ու Մեծ Թուրանի ստեղծման անհրաժեշտությունը[5], սակայն, ինչպես նկատում է Զարեվանդն իր աշխատության մեջ՝ լեզվով, հավատով և մշակույթով մոտիկ ժողովուրդների միավորման գործում կար մի խոչընդոտ՝ դա Հայաստանն էր: «Արդյո՞ք դրանով չի բացատրվում հայերի նկատմամբ թուրքերի չդադարող թշնամանքն ու թուրքական բոլոր կառավարությունների կողմից վերջիններիս նկատմամբ պարբերաբար իրականացվող կոտորածները»[6], – հռետորական հարցադրում է անում հեղինակը:

Արծարծելով այս հարցը՝ հնչակյան տեսաբան Ստ. Սապահ-Գյուլյանը գրում է. «Թուրք ազգայնական քաղաքականությունը ո՛չ «Իտտիհատն» է սկզբնաւորել, ո՛չ էլ «Կարմիր Սուլթանը» (նկատի ունի Աբդուլ Համիդ II-ին – Հ. Գ.): Նրանք ավելի շեշտուած ձեւերով շարունակել են այն, ինչը որ արդեն գոյութիւն ունէր, գործում էր դեռ 1840-ական թուականներից: Որպէսզի Ասիայի մեջ էլ չենթարկուէր անդամահատութիւնների, ազատագրուած ազգերի օրինակը աչքի առաջ ունենալով, թուրք ազգայնականութիւնը աշխատել է Օսմանեան ներքին քաղաքականութեան կռուաննե-

---

[2] *«Հնչակ», 10. IV. 1900:*

[3] *Լ է օ. 1899, 243:*

[4] *Ֆ ի ր բ յ ո ւ խ ե ր. 2000, 27:*

[5] *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.). 1982, 119–120:*

[6] З а р е в а н д. 1930, 36.

րից մէկն էլ Համաիսլամութիւնը դարձնել: Դա քաղաքական մի գաղափար էր, որ գալիս էր իր մէջ ամփոփելու Թուրքին, Քիւրդին, Աւշարին, Թաթարին, Լազին, Աջարին, Զերքէզին ... Արաբներին ու նրանցից ժողովրդագրական, ազգագրական մի ամբողջութիւն, միութիւն կազմելով՝ հակադրէր Հայերին Հայաստանի մէջ»[7]*:*

1889 թ. ստեղծված երիտթուրքական առաջին կազմակերպությունը «Իթթիհատ Օսմանիեն» էր (Օսմանների միություն), որը հետո կոչվեց «Իթթիհատ վե թերաքքը» (Միություն և առաջադիմություն): Զկարողանալով ազատ գործել Թուրքիայում՝ ընդդիմադիրները գործում էին Եգիպտոսում, եվրոպական մի շարք երկրներում, ուր հրատարակում էին իրենց պարբերականները՝ «Հուրիեթը» Լոնդոնում, «Մեշվերեթը» Փարիզում, «Օսմանլը», «Հագիգաթ», «Միզան» թերթերը՝ Ժնևում, «Սանջակը», «Ֆերատը» Եգիպտոսում:

Գիտակցելով, որ սուլթանական վարչակարգի փոփոխությունը միայն իրենց ուժերով չեն կարող իրականացնել՝ երիտթուրքերի առաջնորդներն արտասահմանի իրենց մասնաճյուղերի առջև խնդիր են դնում համաձայնություն կայացնել սուլթանական վարչակարգին ընդդիմադիր բոլոր ուժերի, այդ թվում՝ նաև հայ կուսակցությունների հետ: «Տակավին ամեն բան կորած չէ, – նշում էր երիտթուրք պարագլուխ Ահմեդ Ռզան, – դեռ կարող ենք մեր պետությունը անկումից ազատել, արաբներից ավելի այս գործի մէջ մեզ կարող են օգնել մեր հայ հայրենակիցները. հարկավոր է, որ միայն հասկացողութեան գանք և մեր փոխադարձ շահերը լավ հասկանանք»[8]*:*

Այսպիսի հանդամանքներում տեղի ունեցան երիտթուրքերի առաջնորդների առաջին շփումները հնչակյանների հետ: 1895 թ. Լոնդոնում Ահմեդ Ռզան հանդիպել է հնչակյանների հետ: Վերջիններս առաջ են քաշում հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման հարցը և ինքնավարության գաղափարը, որոնք չեն ընդունվում: 1896 թ. Լոնդոնում Ահմեդ Ռզան վերակազմյալ հնչակյաններին առաջարկում է հրաժարվել Ինքնավար Հայաստանի պահանջից: Վերակազմյալներն առարկում են՝ պատճառաբանելով, որ այդ խնդրի տնօրինումը պատկանում է ողջ հայությանը, և կուսակցությունն իրավունք չունի ազգի փոխարեն վճիռներ կայացնել[9]*:*

«Երիտասարդ Թիւրքիա» հոդվածում Ա. Արփիարյանն, արտահայտելով իր դիրքորոշումն այդ շարժման նկատմամբ, գրում էր, որ Երիտասարդ թուրքերը Թուրքիայի քրիստոնյաներին ավելի թշնամի են, քան հին թուրքերը, իսկ ինչ վերաբերում է Օսմանյան Սահմանադրությանը, ապա, ըստ նրա, այն «քրիստոնեաները պարզապես օսմանցիներ ընելու միջոցն էր»[10]*: Խոսելով 1896 թ. Փարիզում երիտթուրքերի առաջնորդների հետ հնչակյանների հանդիպումների մասին, որոնց մասնակցել էր նաև ինքը՝ Արփիարյանը գրում էր՝ ընդհանուր համաձայնություն չկայացավ այն պատճառով, որ ցանկանալով հայերի հետ համագործակցել՝ նրանք հայտարարում էին՝ հայերը պետք է հրաժարվեն բարենորոգումների պահանջից*[11]*:*

---

[7] Սապահ-Գիւլեան. 1915, 47–48:
[8] Սապահ-Գիւլեան. 1916, 202–203:
[9] Հայոց պատմություն. 2015, 118:
[10] «Մարտ» (Լոնդոն), 20. XII. 1897:
[11] «Նոր կեանք» (Լոնդոն), 1900, թիւ 21, 323–326:

Սապահ-Գյուլյանը «Հնչակում» գրում էր, որ Միդհատյան Սահմանադրությունը իրական ոչ մի ծառայություն չի կարող մատուցել օսմանյան պետությանը, եթե այն վերահաստատվի ու գործադրվի: Ըստ նրա, Երիտասարդ թուրքերը սխալվում են՝ գտնելով, որ օսմանյան պառլամենտի վերաբացումը միակ միջոցն է Թուրքիան հզորացնելու և կործանումից փրկելու: Նա ընդգծում էր, որ այն չի արտահայտում հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի իրական շահերն ու ձգտումները: Ըստ այդ Սահմանադրության՝ ընտրական այնպիսի իրավունք էր կազմվել, այնպիսի պայմաններ էին սահմանվել, որ «քրիստոնեայ որևէ համայնք, հազիւ նրա մէջը 5–10 պատգամաւոր ունենար»: Կարո՞ղ էին արդյոք «բողոքող, դժգոհող ժողովրդի ներկայացուցիչները իրենց 5–10 ձայնով պաշտպանուելու ընդդեմ 240-ի», – հռետորական հարցադրում էր անում Սապահ-Գյուլյանը, և ինքն էլ պատասխանում՝ մեծամասնության իրավունքն ու կամքն անվիճելի պիտի լիներ, և այդ պայմաններում դժգոհողներն ու իրենց ներկայացուցիչները «օտար պետութիւններին օգնութեան կանչելու իրավունք այլեւս չպիտի ունենային, ապա նրանց պիտի մնար միայն կամա-ակամա հնազանդել մեծամասնութեան»[12]: Եթե Երիտասարդ թուրքերը ցանկանում են առաջադիմական դեր կատարել իրենց պատմության մեջ, ապա ըստ Սապահ-Գյուլյանի՝ նրանք պիտի աշխատեն ավելի լավ ճանաչել թուրքական պետությունը, նրա բաղկացուցիչ ժողովուրդներին: Դրանից հետո միայն պիտի կազմակերպվեն իբրև պայքարող քաղաքական մարմին ու իրենց նպատակը դարձնեն փոխել տիրող պայմանները և ստեղծել «իրերի իսկական պահանջներին համապատասխան այնպիսի նոր հաստատութիւններ, որից հաւասարապես կարող լինեն օգտուել թէ՛ բաղկացուցիչ պայքարող ազգութիւնները և թէ՛ նոյն ինքն Թիւրքիան»[13]:

Պատահական չէր այն հանգամանքը, որ, երբ 1902 թ. Փարիզում կայանալիք Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի կոնգրեսին մասնակցելու համար երիտթուրքերը հրավեր են ուղարկում նաև հնչակյաններին, վերջիններս մերժում են՝ պատճառաբանելով, որ իրենց ծանոթ է Հայկական հարցի վերաբերյալ երիտթուրքերի տեսակետը:

1906 թ. հուլիսին երիտթուրքերի ղեկավարներից Ահմեդ Ռզան, բժիշկներ Նազիմը, Բեհաէդդին Շաքիրը նորից Փարիզում հանդիպումներ ունեցան հնչակյան ղեկավարների հետ: Քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Հայկական հարց և համապետական ուղղություն,

2. Ինքնավար Հայաստան և Թուրքիա,

3. Ժողովրդավարական Սահմանադրություն և Միդհատյան Սահմանադրություն,

4. Հայկական հարց և արտաքին միջամտություն,

5. սոցիալիզմ և ազգայնականություն,

6. ազգություն և օսմանցիություն,

7. կազմակերպություն, քարոզչություն և հեղափոխական գործունեություն,

---

[12] «Հնչակ», 10. I. 1901:

[13] «Հնչակ», 10. I. 1901:

8. միջկուսակցական մարմիններ և միջկուսակցական հարաբերություններ[14]:

Տարաձայնությունները սկսվեցին հենց առաջին հարցի քննարկման ժամանակ: Երիտթուրքերը պաշտպանում էին այն տեսակետը, որ հայկական, մակեդոնական, արաբական հարցերը պետք է լուծվեն Օսմանյան կայսրության ամբողջականության և համապետական բարենորոգումների պայմաններում՝ բերելով Ռուսական կայսրությունում ծավալված իրադարձությունների օրինակը: Եթե ընդունվեն օսմանյան պետության դեմ ծառացած խնդիրները և կատարվի համապատասխան բավարար աշխատանք այդ ուղղությամբ, ապա կլուծվեն նաև «առանձին դատերը»:

Ի պատասխան երիտթուրքերի տեսակետին՝ հնչակյանները հայտնեցին, որ Ռուսական և Օսմանյան կայսրությունների պատմական զարգացումներն ու ներկա իրավիճակները տարբեր են: Ռուսական ընդդիմադիր ուժերը կռվում են ոչ թե պետության, այլ՝ պետականության դեմ, իսկ Օսմանյան կայսրությունում ազատագրական շարժումներն ուղղված են պետության դեմ: Արևելյան հարցը, մասնավորապես՝ նրա բաղկացուցիչ մաս կազմող Հայկական հարցը, պահանջում են առանձին լուծումներ: «Հայկական խնդրի լուծումը, – նշում էր Սապահ-Գյուլյանը, – պիտի դար, որոշ աստիճանով նպաստելով ամբողջութեանը, մասնավորից ընդհանուրին երթալու մեթոտով»[15]:

Այնուհետև հնչակյանները պահանջ էին դնում ընդունել Հայ Դատը, ինչպես նաև՝ քարոզել այն, հակառակ դեպքում համագործակցության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Երկար ու ձիգ վիճաբանություններից հետո երիտթուրքերը խոստանում էին ընդունել Հայ Դատը, սակայն պայմանով, որ հնչակյանները նպաստեն համապետական խնդիրների լուծմանը: Հնչակյաններն ընդգծեցին, որ Թուրքիան կարող է գոյությունը պահպանել իր կազմի մեջ մտնող ազգություններին քաղաքական ինքնավարություն տալու պարագայում: «Հայաստանի քաղաքական ինքնավարութիւնը մեր էական և առաջին պայմանն էր. միայն այդ գաղափարի ընդունելովն էր, որ մենք կարող պիտի լինեինք համաձայնութեան եզր գտնել»[16],– հայտնում էին հնչակյանները: Երիտթուրքերը՝ ի դեմս Նազիմ բեյի, փորձում էին շրջանառության մեջ դնել ընդհանուր բարեփոխումների թեզիսը՝ տեղական լայն բարեկարգումներով: Սակայն հնչակյանները մերժեցին այն՝ պատճառաբանելով, որ դա բոլորովին չի համապատասխանում «հայ ազգի հրամայական պահանջներին»[17]:

Բնականաբար, երիտթուրքերին սկսեց անհանգստացնել հայկական քաղաքական ինքնավարության սահմաններում ապրող մահմեդական ազգաբնակչության ճակատագիրը: Հնչակյանները պատասխանեցին, որ նրանք կմնան և կօգտվեն այն բոլոր քաղաքական, տնտեսական, ընկերային իրավունքներից, ինչպես՝ հայերը:

Դիրքորոշումների այս տարբերությունները տեղիք տվեցին սուր հակասությունների առաջացմանը, որից հետո Ահմեդ Ռզան ասաց. «Քանի որ վճռել ենք ձեզ հետ համաձայնիլ, ուստի Ինքնավար Հայաստանի գաղափարը սկզ-

[14] Սապահ-Գիւլեան. 1916, 203–204:
[15] Սապահ-Գիւլեան. 1916, 205–206:
[16] Սապահ-Գիւլեան. 1916, 206:
[17] Սապահ-Գիւլեան. 1916, 206–207:

բունքով ընդունում ենք, բայց ավելի մանրամասնութեանց հետ ծանօթանալու համար կ՚ուզէինք տեսնել քարտէզը ձեր պահանջած վայրերի և մեզ երկարօրէն բացատրիք ո՛չ միայն Ինքնավարութեան ձևն ու կիրառութիւնը, այլև՝ թէ նա ինչ կապ և յարաբերութիւն պիտի ունենար Օսմանեան պետութեան հետ»[18]:

Հաջորդ նիստին հնչակյանները ներկայացրեցին պատմական Հայաստանի քարտեզը՝ ցույց տալով, թե որ մասն է գտնվում Թուրքիայի, որը՝ Իրանի և որը՝ Ռուսաստանի տիրապետության տակ: Այդ քարտեզի մեջ, որպես Հայաստանի մաս, ներառված էր նաև Կիլիկիան, որը հարուցեց երիտթուրքերի դժգոհությունը, «որովհետև, կայսրութիւնը երկու մասի պիտի բաժանուէր, – Միջագետքը, Արաբիան, Սիրիան ... իրականորէն պիտի կտրուէին Օսմանութեան Մայր կտորից»[19]:

Ինքնավար Հայաստանի պետական համակարգն ու կառուցվածքը հնչակյանները պատկերացնում էին հետևյալ կերպ.

1. Ինքնավար Հայաստանը գտնվելու էր թուրքական գերիշխանության ներքո, բայց միաժամանակ ունենալու էր եվրոպական պետությունների հովանավորությունը,

2. ընդհանուր կառավարչապետը նշանակվելու էր եվրոպական տերությունների կողմից,

3. լինելու էր պառլամենտական համակարգ,

4. գործադիր իշխանությունը խորհրդարանի հովանավորությամբ իրականացնելու էր կառավարչապետը, որը հաշվետու էր լինելու խորհրդարանին,

5. տեղական նահանգային մարմիններն օժտված էին լինելու լայն ինքնավարությամբ,

6. պետական լեզու էր ճանաչվում հայերենը,

7. հատկացվելու էր գումար համապետական խնդիրների համար,

8. հասարակական կարգը պահպանելու էր ժողովրդական ոստիկանությունը և այլն[20]:

Վիճաբանությունները ծավալվեցին նաև ազգության և օսմանցիության հարցի քննարկման ժամանակ: Երիտթուրքերն առաջ էին մղում անկախ կրոնից ու ազգությունից՝ կայսրության բոլոր ժողովուրդների ձուլման և օսմանյան ազգի ստեղծման գաղափարը: Դրանով նրանք հասկացնում էին հայերին, որ Ինքնավար Հայաստանի գաղափարի քարոզչությունն ավելորդ է և, փաստորեն, հրաժարվում էին Հայկական հարցի ճանաչումից:

«Մենք և մեր քննադատները» հոդվածում պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ հայ կուսակցությունները մասնաճյուղային կազմակերպություններ չեն ստեղծում թուրքերի հետ՝ Սապահ-Գյուլյանը վկայակոչում է եվրոպական կրթություն ստացած մի թուրք մտավորականի հետևյալ խոսքերը, ըստ որի՝ «դեռ 2–3 հոգի չհավաքված լուրը հասցնում են կառավարութեանը: Դեռ մոլա, կրոնական զգացմունքներ, ավանդութիւններ մեր մեջ տիրապետող են»[21]: Շարունակելով միտքը՝ թուրք մտավորականը նշել է՝ հեղափոխական կազմա-

[18] Սապահ-Գիւլեան. 1916, 207:
[19] Սապահ-Գիւլեան. 1916, 208:
[20] Սապահ-Գիւլեան. 1916, 209:
[21] «Հնչակ» (Փարիզ), 1906, թիւ 9–10:

կերպություններ ստեղծելու իրենց բոլոր փորձերը Թուրքիայում ձախողվել են և իրենք համոզվել են, որ դեռ շատ վաղ է անկեղծ նման կազմակերպություններ ստեղծելը: Սապահ-Գյուլյանը վկայակոչում է նաև հնչակյան հայտնի գործիչ Արամ Աչըգպաշյանի այն խոսքերը, ըստ որի՝ «ամբողջ 12 տարի աշխատելով հազիվհազ 2–3 թուրք կարողացա շահիլ և յեղափոխական դարձնիլ մեր գործակցելու համար»[22]: Հոդվածագիրը գտնում է՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է նաև, որ նրա բաղկացուցիչ մասերը կազմող ժողովուրդները ևս դա ցանկանան: Այնուհետև մակեդոնացիների ու արաբների օրինակներով նա ցույց է տալիս, որ նման ցանկություն նրանք չունեն. «Ո՞վ է մնում՝ քուրդը, չերքեզը, լազը … սրա՞նք են, որ պիտի կարողանան և աշխատեն նորագույն պետութիւն կազմել Օսմանեան խարխլուած կայսրութիւնից, երբ իրենցից ոմանք նստակեաց չեն, ոմանք էլ կիսաբարբարոսներ են»[23]: Ինչ վերաբերում է տիրող թուրք ժողովրդին, ապա Սապահ-Գյուլյանը մատնանշում է, որ նրա առաջադեմ մասը միավորված է միայն երկու խմբակի մեջ՝ «Իթթիհատ վե թերաքքը» և «Մեշվերեթ», միաժամանակ ընդգծում է՝ դրանք դեռևս չունեն ճյուղավորված կազմակերպություններ և, որ էական է, երկուսն էլ մոլի ազգայնականներ են ու չեն ուզում լսել «ոչ յեղափոխութեան, ոչ Հայկական խնդրի, ոչ էլ անգամ մայիսի 11-ի ծրագրի անունը»[24]:

Ամփոփելով հոդվածը՝ Սապահ-Գյուլյանը եզրակացնում է, որ եթե օսմանյան պետության «հին ու նոր տարրերը հայ ժողովրդին ապրելու նուազագոյն պայմաններ չեն տալիս, ապա մեր սահմանափակ ուժերով չենք կարող կանգնեցնել պատմութեան ընթացքը և գործադրել այն, ինչը որ անգամ եվրոպական պետութիւնները չկարողացան անել,– այն է՝ ընդհանուր Թուրքիայի բարեկարգման մեջ տեսնել մեր վիճակի բարվոքումը»[25]:

Երիտթուրքական հեղաշրջումը և հնչակյանները

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը նոր իրադրություն առաջացրեց Օսմանյան կայսրությունում: Ազգային կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, հնչակյանները և մյուսները, ոգևորված երիտթուրքերի ազատության, հավասարության կարգախոսներով, հրաժարվեցին անկեղծ գործելակերպից՝ իրենց ուշադրությունը կենտրոնացնելով գլխավորապես պառլամենտական պայքարի վրա[26]:

Արևմտահայ գրող Արշակ Ալպոյաճյանի ընորոշմամբ՝ երիտթուրքական հեղաշրջումը գավառահայության հասարակական մտայնության մեջ լուրջ տեղաշարժեր առաջացրեց: Հայերի մոտ պատրանք էր առաջացել, թե «փչրուած էին զիրենք ճնշող և կաշկանդող շղթաները»[27]: Նա գրում է, որ Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում ոգևորված բազմաթիվ հայեր, հույների ու թուրքերի հետ անդամագրվում էին «Իթթիհատ վե թերաքքը» կուսակցությանը, սակայն հատկապես կիլիկիահայության 1909 թ. կոտորա-

[22] «Հնչակ», 1906, թիւ 9–10:
[23] «Հնչակ», 1906, թիւ 9–10:
[24] «Հնչակ», 1906, թիւ 9–10:
[25] «Հնչակ», 1906, թիւ 9–10:
[26] Ներսիսյան. 2013, 81:
[27] Ալպոյաճեան. 1937, 1269:

ծից հետո հեռացան այդ կուսակցությունից՝ տեսնելով, որ թուրքական մտայնության մեջ ոչինչ չի փոխվել[28]:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո հնչակյանները դուրս եկան ընդհատակից: 1908 թ. օգոստոսի 16-ին հնչակյան պատվիրակությունը [Սապահ-Գյուլյան, Մուրատ (Հ. Պոյաճյան), Հ. Ճանկյուլյան] պաշտոնական այցելություն կատարեցին Կ. Պոլսի իթթիհատական կոմիտեի պաշտոնատեղին, ուր նրանց ընդունեց Բեհաէդդին Շաքիրը: Նրանք ողջունեցին երկրում հռչակված Սահմանադրությունն ու հույս հայտնեցին, որ այն հնարավորություն կընձեռնի խորհրդարանական պայքարով ընդլայնել դեմոկրատական կարգերը:

Նոյեմբերին հատուկ շրջաբերականով կուսակցության կենտրոնական վարչությունը հայտարարեց՝ հայ ժողովուրդն անջատողական չէ և Թուրքիայի միասնականության կողմնակից է, որ դադարեցնում է անլեգալ գործունեությունն ու լծվում «Տաճկահայաստանի ընդհանուր զարգացան գործին», հույս էր հայտնվում, որ Սահմանադրությունը կնպաստի ոչ թուրք ժողովուրդների տնտեսական ու մշակութային զարգացմանը: Հայտարարվեց, որ հնչակյանները կստարեն սահմանադրական կարգին, եթե հետադիմականները փորձեն այն տապալել: Այդպես էլ եղավ: 1909 թ. մարտի 31-ին՝ սուլթանական ուժերի խռովության օրերին, դաշնակցության հետ հնչակյանները նույնպես սատարեցին երիտթուրքերին: Մուրատն ու Հ. Արծրունին առաջարկում են նաև հնչակյան կամավորական ջոկատով օգնել բանակային զորամասերին, որը, սակայն, չի ընդունվում երիտթուրքերի կողմից:

Այն նույն օրերին կիլիկիահայության կոտորածներն անակնկալի են բերում օսմանյան Սահմանադրությամբ և երիտթուրքական լոզունգներով ոգևորված հնչակյաններին: Ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում խնդիր էր առաջացել ճշգրտելու կուսակցության գործունեությունը նոր պայմաններին համապատասխան: Այդ հարցերը քննարկվեցին 1909 թ. հուլիսին Կ. Պոլսում կայացած կուսակցության 6-րդ պատգամավորական ժողովում: Այստեղ պայքար ծավալվեց Թուրքիայի հանդեպ հնչակյան կուսակցության դիրքորոշման ճշտման հարցի շուրջ: Արևելահայ պատգամավորների մեծ մասը՝ Սապահ-Գյուլյան, Փարամազ, Բագրատ Սյունիք, հավատ չէին ընծայում օսմանյան Սահմանադրությանը և պնդում էին՝ շարունակելու անլեգալ գործունեությունը: Արևմտահայ պատգամավորների մեծամասնությունը՝ Մուրատ, Աչըգպաշյան, Արամյանց և այլոք, որոնք կազմում էին ժողովի մեծամասնությունը, դեմ էին պայքարի արմատական-հեղափոխական մեթոդներին: Նրանք գտնում էին, որ արևմտահայությունը գտնվում է ուժասպառ վիճակում, և անլեգալ գործունեության անցնելը կարող էր մեծ փորձության առջև կանգնեցնել նրան:

Ձայների մեծամասնությամբ ընդունվեց արևմտահայ պատգամավորների տեսակետը, ըստ որի՝

1. Թուրքիայում կուսակցությունն անցնում է գործունեության լեգալ պառլամենտական ձևին,

2. մերժում է ոչ թուրք ժողովուրդների թուրքերի հետ ձուլվելու և մեկ ընդհանուր օսմանցի անվանումն ընդունելու երիտթուրքերի գաղափարը,

---

[28] *Ա լ պ ո յ ա ճ ե ա ն. 1937, 1272:*

3. կիլիկիահայության կոտորածի տխուր փորձը նկատի ունենալով՝ ժողովը հանձնարարեց կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանության նախապատրաստման գործը,

4. փոփոխվեց կուսակցության անվանումը. այն կոչվեց Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցություն,

5. ընտրվեց կուսակցության Տաճկաստանի կենտրոնական վարիչ մարմինը՝ Մուրատ, Ա. Աչըգպաշյան, Հմ. Արամյանց, Ն. Զաքարյան, Հ. Արծրունի,

6. Թուրքիայից դուրս գտնվող հնչակյան կազմակերպությունները չպետք է պաշտոնական որևէ հարաբերության մեջ մտնեն Տաճկաստանի կազմակերպության հետ՝ նրա լեգալիզմը չվտանգելու համար,

7. Ռուսաստանում և Կովկասում կուսակցությունը շարունակելու էր նախկին անլեգալ գործունեությունը:

Իթթիհատի՝ հատկապես ազգային քաղաքականության քննադատության հիմքի վրա հնչակյանները մերժեցան ընդդիմադիր «Հյուրիեթ վե իթիլաֆ» (Ազատություն և համաձայնություն) կուսակցության հետ, և 1912 թ. փետրվարի 7-ին ստորագրվեց համագործակցության մասին պայմանագիր: Համաձայնագրի ստորագրմամբ հնչակյանները որոշ հույսեր ունեին, որ իշխանության գալու դեպքում կբարելավվի արևմտահայության դրությունը, քանի որ, ընդհանուր առմամբ, Իթիլաֆը հանդես էր գալիս օսմանյան պետության բաղկացուցիչ ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի դիրքերից: Ինչ վերաբերում է անգլիական կողմնորոշում ունեցող Իթիլաֆին, ապա այս համաձայնությունը նրան ավելի շատ անհրաժեշտ էր իր քաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով:

Այս շրջանում արծարծելով Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը՝ ժնևում հրատարակվող հակաիթթիհատական օրգան «Իգտամ» թերթի խմբագիր Ալի Քեմալը գրում էր. «Օսմանեան կառավարութեան արաբներուն նման հայերուն հետ նախաշաւիղ համաձայնութիւն մը կնքելով յիշեալ բարենորոգմանց սկսիլը շատ պատշաճ է. նոյնիսկ միակ ճշմարիտ ճամբան է»[29]: Պետք է ընդգծել, որ պարբերականն իրավացիորեն նշում էր, որ մեծ պետությունների գլխավոր նպատակը «հայերն ու Հայաստանի բարենորոգումները չեն, այլ բոլորովին մասնաւոր շահեր ունին»[30]:

Կարճ ժամանակում ակնհայտ դարձավ, որ հեղաշրջումից հետո էլ կայսրության հպատակ ժողովուրդների կյանքում առաջընթաց չնկատվեց, ընդհակառակն՝ ազգային հարցում երիտթուրքերը շարունակեցին սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականությունը: «Թուրքիայում» հոդվածում Թիֆլիսի «Кавказ» թերթը գրում էր, որ օսմանյան պառլամենտում իշխող իթթիհատականների և ընդդիմության միջև եղած հակամարտությունը վերածվում է բացահայտ թշնամության: Հակակառավարական ելույթներն ավելի ու ավելի են տարածվում թուրքահպատակ ժողովուրդների մեջ՝ Ալբանիայում, Մակեդոնիայում, Անատոլիայի հայկական վիլայեթներում: Պարբերականը զարմանքով է արձանագրում՝ իշխանությունները, որոնք դեռ որոշ ժամանակ առաջ քննադատում էին սուլթանական կառավարության քաղաքականությունը,

[29] *«Կոհակ» (Կ. Պոլիս), 04. IX. 1913:*
[30] *«Կոհակ», 04. IX. 1913:*

այժմ հպատակ ժողովուրդների հարցում իրենք են վարում նախկին սուլթանական քաղաքականությունը[31]:

Երիտթուրքերի՝ ազգայնամոլ, հակահայկական քաղաքականությունը իրենց պարբերականներում սուր քննադատության ենթարկեցին հնչակյանները:

Օսմանյան կայսրությունում լայն տարածում գտած հայերի հողային զավթումների, նրանց նկատմամբ վարվող տնտեսական, կրոնական ու ազգային հալածանքների շարունակվող քաղաքականությունը թուրքական իշխանությունները փորձում էին արդարացնել մտացածին և հնարովի պատճառաբանություններով: Այդ խնդիրների անտեսումը, ժխտումը կամ փաստերի կեղծումը դարձել էր կառավարության հիմնական գործելակերպը: Դրա վառ ապացույցը 1909 թ. Կիլիկիայի հայության կոտորածն էր և դրան հետևող կառավարության ու պետական պաշտոնյաների մեկը մյուսին հակասող կեղծ պատճառաբանությունները: Եթե կառավարությունը փորձում էր մեղքը բարդել տապալված սուլթանի կողմնակիցների վրա, ապա Փարիզի թուրքական դեսպանը հայտարարում էր, որ Կիլիկիայի դեպքերը հայերի անջատողական ձգտումներին հետևանքն են միայն[32]:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո թուրքական մամուլը նյութեր էր տպագրում հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան պետության բարեգութ վերաբերմունքի մասին: Այդ հրապարակումների նպատակն էր ապացուցել՝ թուրքերը շատ վաղուց բարի կամք ու ցանկություն են դրսևորել և թույլ տվել, որ նվաճված ժողովուրդները պահպանեն իրենց ազգային լեզուն, կրոնը, սովորույթները, մի խոսքով՝ հարգել են հպատակ ժողովուրդների պատմամշակութային առանձնահատկությունները:

Արծարծելով խնդիրը՝ Ստ. Սապահ-Գյուլյանը պատմական բազում փաստերով ապացուցում էր, որ աշխարհակալ ոչ մի ազգ այնքան վայրագ աշխատանք չի կատարել ենթակա ազգություններին քայքայելու, բռնի ուժով ձուլելու համար, որքան օսմանցի իշխողները: Նա գրում էր. «Հայ, հույն, բուլղար, սերբ, ռումեն, մաղար պատմությունների մարտիրոսական էջերը վկա են հաստատելու համար, թե պարտվող այդ ազգերը ինչ ճիվաղային տառապանքների, ինչ անլուր հալածանքների են ենթարկվել իրենց գոյությունը պահելու համար»[33]: *Դառնալով 1908 թվականից հետո տիրող իրավիճակի բնութագրմանը՝ հնչակյան տեսաբանն ընդգծում էր, որ, չնայած այն բանին, հայ ժողովուրդը և նրա կուսակցությունները սատարեցին սահմանադրական Թուրքիայի ստեղծման գործին՝ հանձն առնելով նյութական, ֆիզիկական և բարոյական զոհողություններ, առավել քան ուրիշ մի ժողովուրդ, այնուամենայնիվ, գալով իշխանության՝ Իթթիհատը ջանք չի խնայել հայերին տնտեսապես քայքայելու*[34]:

Պատահական չէր այն փաստը, որ, երբ օսմանյան պառլամենտում 1911 թ. հնչակյան պատգամավոր Մուրատը քննադատում է ներքին գործերի նախա-

---

[31] «Кавказ» (Тифлис), 01. I. 1912; 04. I. 1912.

[32] *«Կոհակ», 30. V. 1909:*

[33] *«Հնչակ», 1913, թիւ 3:*

[34] *«Հնչակ», 1913, թիւ 3:*

բար խալիլ Բեյին երկրի տարբեր շրջաններում ամեն օր կատարվող սպանություններին, հափշտակություններին, առևանգումների ու բռնի կրոնափոխությունների սպառնալի չափերի համար և պահանջում կտրուկ միջոցներ ձեռք առնել, նախարարը հանգիստ պատասխանել է, թե այլ երկրներում էլ են նման դեպքեր պատահում: Ներքին գործերի նախարարն այստեղ գիտակցաբար լռում էր՝ փորձելով դրանց տալ առօրեական դեպքերի բնույթ, որպեսզի կոծկի կազմակերպված ու հետևողական բնույթը. մի քաղաքականություն, որը տարվում էր հենց կառավարության կողմից[35]:

1908 թ. հեղաշրջումից հետո Կ. Պոլսում հրատարակվող հնչակյանների «Կոհակ» պարբերականն անդրադառնում է հետևյալ հարցին. Հայկական հարցի միջազգայնացումից հետո թուրքերը ձգձգում և չեն իրագործում հայկական նահանգներում բարենորոգումների իրագործման ուղղությամբ իրենց ստանձնած պարտավորությունները՝ պատճառաբանելով, որ հայերը խռովարար են ու անջատողական ձգտումներ ունեն: «Կոհակը» բազում փաստերով ապացուցում էր, որ հայ ժողովրդի միակ ձգտումը եղել և մնում է Օսմանյան կայսրության տարածքում իր կյանքի ու գույքի ապահովությունը, ինչպես պարբերականն էր գրում՝ «Բարեկարգ վարչություն» հաստատելու ձգտումը[36]:

Կուսակցության գլխավոր պարբերական «Հնչակը» հանգում է այն եզրակացության, ըստ որի՝ թուրքական կառավարությունը հարմար առիթի է սպասում մեկընդմիշտ ոչնչացնելու հայությանը. «Թուրք ազգայնականությունը մեզ չի խնայելու ոչ մի պայմանով, իսկ նրա բոլոր շողոքորթություններն ու մեղրածորուն հայտարարությունները ընդհամենը ժամանակ շահելու միջոցներ են»[37]:

1912–1913 թթ. Բալկանյան պատերազմների շրջանում, երբ վերաբացվեց Հայկական հարցը և եվրոպական պետություններն ակտիվացրին հայկական բարենորոգումների նախագծի քննարկումները, երիտթուրքական կառավարությունն էլ ավելի խստացրեց իր հալածանքները հայերի նկատմամբ՝ դրա հետ սաստկացնելով հակահայկական քարոզչությունը: Այդ տարիներին թուրքական թերթերն ու կառավարական պաշտոնյաները, մեկը մյուսին հակասելով, տարածում էին այն կեղծիքը, թե Հայկական հարց գոյություն չունի և որ բարենորոգումները վերաբերում են ոչ միայն հայկական, այլև Օսմանյան կայսրության բոլոր նահանգներին: Այսպես, Գերմանիայում Թուրքիայի դեսպան Մահմուդ Մուխթար փաշան հայտարարում էր, որ թուրքական պետության համար Հայկական հարց գոյություն չունի: Կառավարության խնդիրն է միայն կարգավորել քրդերի ու հայերի միջև գժտությունները: Շարունակելով միտքը՝ նա հայտարարում էր. «Մենք ամեն բան անելու ենք ուժով, մեկ Օսմանեան կայսրութիւն հիմնելու համար»[38]:

Իր հրապարակումներում ավելի առաջ գնաց Իթթիհատի պաշտոնական օրգան «Թանին» թերթը: Ժխտելով ընդհանրապես հայ ազգի գոյությունը՝

[35] *«Կոհակ», 15. V. 1911:*
[36] *«Կոհակ», 27. VI. 1909:*
[37] *«Հնչակ», 1913, թիւ 3:*
[38] *«Հնչակ», 1914, թիւ 2:*

պարբերականը հայտարարում էր, որ Օսմանյան կայսրությունում միայն մեկ ազգ կա՝ Օսմանցի ազգը[39]:

Պետք է ընդգծել այն իրողությունը, որ 1908-ից մինչև 1914 թ. ընկած ժամանակահատվածում՝ այսինքն՝ իշխանության գալուց հետո, Երիտթուրքերի ներքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը, այսպես կոչված, մեկ միասնական ազգի ստեղծումն էր, որն իրենից ներկայացնում էր կայսրության բոլոր հպատակ ազգությունների և ժողովուրդների առանձին, ինքնուրույն գոյության անտեսումն ու մերժումը և թուրքերի մեջ տարրալուծելով մեկ ընդհանուր օսմանյան ազգի ստեղծումը: Իր հետադիմական էությամբ հանդերձ՝ սա ինքնին հակասում էր օսմանյան հպատակ ժողովուրդների նկատմամբ սուլթանների վարած առաջադեմ և լուսավորյալ քաղաքականության մասին թուրքերի՝ նախորդ շրջանի հրապարակումներին ու հայտարարություններին: Գիտակցելով Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հայությանը սպառնացող մեծ վտանգը, կարևորելով ու առաջ մղելով հայ ժողովրդի ինքնապաշտպանության դժվարին խնդիրը՝ հնչակյան կուսակցությունը հակահարված էր տալիս նաև թուրքական նենգափոխությունների փորձերին: Իրենց պարբերականներում հնչակյան տեսաբանները ցույց են տվել դրանց միտումնավորությունն ու սնանկությունը, ինչպես նաև՝ կեղծ և հակահայկական էությունը:

Եզրակացություն

XIX դարավերջին և XX դարասկզբին երիտթուրքերի հետ շփումները հնչակյաններին հանգեցրին այն եզրակացության, որ երիտթուրքերը Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման կողմնակիցներն են, ազգային հարցում շարունակում են սուլթանների հետադիմական քաղաքականությունը, դեմ են ոչ միայն Ինքնավար Հայաստանի, այլև հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման գաղափարին և նպատակ ունեն թուրքահպատակ մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդին ձուլել մեկ ընդհանուր՝ «օսմանյան ազգի» մեջ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հնչակյանների համար ակնհայտ էր, որ համաթուրանական գաղափարներ որդեգրած երիտթուրքական կառավարության քաղաքականությունը հանգեցնելու էր հայ ժողովրդի ոչնչացմանը:

Այդ պայմաններում հնչակյաններն առաջ քաշեցին արևմտահայերի ինքնապաշտպանության նախապատրաստման անհետաձգելի գաղափարը:

Համաթուրանականությունը (պանթուրքիզմ) ներկայումս պահպանում է իր կենսունակությունը և մնում է ժամանակակից Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում՝ լուրջ սպառնալիք ներկայացնելով հայոց պետականության համար:

Գեղամ Հովհաննիսյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազգային կուսակցությունների պատմություն և

[39] *«Հնչակ», 1914, թիւ 2:*

Հասարակական-քաղաքական միտք: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 30 հոդվածի: gegam.hovhannisian@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալպոյաճեան Ա. 1937, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. I, Գահիրէ, Կեսարիոյ և շրջակայից հայրենակցական միութեան Գահիրեյի վարչութեան հրատ., 1295 էջ:

Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), 1982, գիրք առաջին, Երևան, «Հայաստան» հրատ., 357 էջ:

Լէօ. 1899, Գլադստոն, Թիֆլիս, Թիֆլիսի հայոց հրատ., 279 էջ:

«Կոհակ» (Կ. Պոլիս), 30. V. 1909, 27. VI. 1909, 15. V. 1911, 04. IX. 1913:

«Հնչակ» (Լոնդոն), 10. V. 1900, 10. I. 1901:

«Հնչակ» (Փարիզ), 1906, թիւ 9–10, 1913, թիւ 3, 1914, թիւ 2:

Հայոց պատմություն. 2015, հ. III, գիրք երկրորդ, Երևան, «Զանգակ» հրատ., 757 էջ:

«Մարտ» (Լոնդոն), 20. XII. 1897:

«Նոր կեանք» (Լոնդոն), 1900, թիվ 21:

Ներսիսյան Ա. 2013, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1908–1918), Զավարյան մատենաշար, հ. Գ., Երևան, Ա. Հ, 351 էջ:

Սապահ-Գիւլեան Ստ. 1915, Ինքնավար Հայաստան, Գահիրէ, Զ. Պերպերեան հրատ., 96 էջ:

Սապահ-Գիւլեան Ստ. 1916, Պատասխանատուները, Փրովիդենս, «Երիտասարդ Հայաստան» հրատ., 352 էջ:

Ֆիրբյուխեր Հ. 2000, Հայաստան. 1915, գերմանացի սպայի վկայությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 108 էջ:

«Кавказ» (Тифлис), 01. I. 1912; 04. I. 1912.

Зареванд. 1930, Турция и пантуранизм (Париж). Ереван, 1991, издатель–комиссия Айдат, 168 с.

МЛАДОТУРЕЦКОЕ ДВИЖЕНИЕ И ГНЧАКИСТЫ
(Конец XIX – начало XX в.)

ГЕГАМ ОГАННИСЯН

Резюме

Ключевые слова: младотурецкое движение, гнчакисты, Османская империя, реформы, Армянский вопрос, Автономная Армения, Степан Сапах-Гюлян.

В конце XIX века, на пике национально-освободительного движения армянского народа против султанского режима, развернулось движение турецкой оппозиции, впоследствии названное движением младотурок, стремившихся утвердить в стране конституционный строй и направить Турцию в русло европейского развития. Реально осознавая, что для достижения поставленной цели собственных сил недостаточно, руководители движения

пытались добиться согласия с политическими организациями подданных народов Османской империи, в том числе с армянскими организациями, вставшими на путь борьбы против османской тирании. На этом этапе обсуждение гнчакистами рассматриваемых вопросов с младотурецкими лидерами показало, что последние не признают необходимость осуществления реформ в Западной Армении и фактически отрицают наличие Армянского вопроса.

Хотя гнчакисты приветствовали младотурецкий переворот (1908 г.), но после резни киликийских армян (1909 г.) убедились в том, что в национальном вопросе младотурки придерживаются политики султанов, и это подвигло гнчакистов выступить с резкой критикой в адрес турецкого правительства.

Накануне Первой мировой войны, осознав опасность угрозы, нависшей над армянским народом, гнчакисты стали активно выступать за необходимость организации и подготовки самообороны западных армян.

Руководствуясь идеологией пантюркизма, младотурецкое правительство, вступив в Первую мировую войну, осуществило свою программу геноцида армян. На сегодняшний день эта идеология вошла в повестку дня внешней политики турецкого государства, являя собой серьезную угрозу для армянской государственности.

Гегам Оганнисян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела новой истории Института истории НАН РА. Научные интересы: история армянских национальных партий и общественно-политическая мысль. Автор 2 монографий и около 30 статей. gegham.hovhannisian@mail.ru

THE YOUNG TURK MOVEMENT AND THE HNCHAKYANS
(End of the 19th c. – beginning of the 20th c.)

GEGHAM HOVHANNISYAN

S u m m a r y

Keywords: Young Turk Movement, Hnchakyans, Ottoman Empire, reforms, Armenian Question, Autonomous Armenia, Stepan Sapah-Gyulyan.

At the end of the 19th century, during the rise of the national liberation movement of the Armenian people, the movement of the Young Turks – the Turkish opposition forces, was launched against the sultanate regime. The Young Turks sought to establish a constitutional, parliamentary order and put the country on a European path of development. Realizing that their forces were not sufficient to achieve this goal, the leaders of the movement tried to reach an agreement and cooperate with the subject peoples of the Ottoman Empire, including the political organizations of the Armenian people, who were fighting

against the Sultanate tyranny. Numerous meetings and discussions of the Hnchakyan party figures with the Young Turk leaders during the mentioned period showed that the latter did not recognize the need for reforms in Western Armenia, did not actually recognize the existence of the Armenian Question and were led by the idea of assimilating the subject peoples of the Ottoman Empire among the Turks and creating one Ottoman nation.

Although the Hnchakyans welcomed the Young Turk's coup (1908) and initially cooperated with them, after the massacre of the Cilician Armenians (1909) finally being convinced that the Young Turks would continue the backward policy of sultans on the national issue, began to sharply criticize the Turkish government's national and economic policies.

Realizing the danger threatening the Armenian people at the threshold of World War I, the Hnchakyans pushed forward the idea of preparing the Armenians of Western Armenia for self-defense.

Guided by the idea of pan-Turanism, the Young Turk government entered World War I and perpetrated its plan – the Armenian Genocide. Up to day this ideology remains on the agenda of the foreign policy of the Turkish state and is a serious threat to the Armenian statehood.

Gegham Hovhannisyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Senior Researcher at the New History Department of the NAS RA Institute of History. Scientific interests: history of Armenian national parties and social-political thought. Author of 2 monographs and about 30 articles.
gegham.hovhannisian@mail.ru